

ՄԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

(«Հաշիւ Նոր-Նախիջևանի Հայագրի աղիւսախնամ եկեղեցական Հոգաբարձութեան 1911 թուի գործունեութեան»)

Մեր հայ կեանքի մէջ կանոնաւոր ու անսայթաք գործունէութիւն ցոյց տուող հաստատութիւնների մէջ աչքի է ընկնում Նոր-Նախիջևանի հայոց եկեղեցական-Հոգաբարձութիւնը, որը, ահա 23-րդ տարին է, առանց աղմուկի, առանց հարայ-հրոցի գործում է և իրապէս գործ է շինում:

Ուղիղ է, Հոգաբարձութեան առաջին տարիները բաւական աղմուկներ բարձրացան այդ հաստատութեան շուրջ, բաւական խոշոր վէճեր ու կուսակցական պայքարներ տեղի ունեցան, բայց դրանք վաղանցուկ էին և նպատակ ունէին միմիայն այդ հաստատութեան շահերն ու օրինական սահմանների մէջ պահելու ցանկութիւնը: Այժմ արդէն այդ կռիւներն ու պայքարները վաղուց անցել են ու մոռացուել, բայց մէջտեղը մնում է մի հաստատուն հիմքերի վրայ դրուած գործ. որ տարէց տարի աճում է, տարէց տարի հարստանում ու զարգանում շնորհիւ Նոր-Նախիջևանի հասարակութեան մէջ դանդաղ մի բուռն ինտելիգենտ հայերի, որոնք ամենայն անձնուիրութեամբ խմբուած գործում են՝ առանց թերանալու իրենց կամովին յանձն առած պարտաւորութիւնների մէջ:

Թէպէտ, ուղիղ է, Հոգաբարձութիւնը իւր գործունէութիւնը սահմանափակած է միմիայն Նոր-Նախիջևանի հայ հասարակութեան նեղ շրջանակում, բայց նա այդ անում է յակամայից՝ Հոգաբարձութեան կանոնադրութիւնն ու կտակարարների կամքն է, որ Հոգաբարձութեան առաջ զձեռն է այդ սահմանը: Իսկ Հոգաբարձութեան եկամուտի աղբիւրները մեծ մասամբ, համարեա ամբողջովին, կազմւում են կտակներից: Իսկ կտակը, ինչպէս օրէնքն է տրամադրում, անփոփոխելի է և սուրբ. և Նոր-Նախիջևանը դեռ չգիտէ օրինակ, որով խախտուած լինէին կտակարարների վերջին կամքը կամ անձեռնմխելի գումարները վատնուէին: Եւ այդ է պատճառը, որ Նախիջևանցին մեծ վստահութիւն ու հաւատ ունի իւր եկեղեցական Հոգաբարձութեան վրայ և ամեն մի փոքր ի շատէ կարողաւոր անձն իւր պարտքն է համարում բաժին հանել նրան:

Եկեղեցական Հոգաբարձութիւնը գործելով Ն. Նախիջևանի հայ հասարակութեան մէջ, նրա իսկ աչքի առաջ, միևնոյն ժա-

մանակ պարտք է համարում ամենայն տարի, անխափան, հրապարակով հաշիւ տալ իւր գործունէութեան մասին տեղի հայ հասարակութեան ներկայացուցիչներին, որոնց թիւը 60 է՝ իւրաքանչիւր վեց եկեղեցու ծխականներից 10—10 հոգի: Բացի այդ, Հոգաբարձութիւնը իւրաքանչիւր տարի տպագրում է նաև իւր գործունէութեան մանրամասն հաշիւը: Մի այդպիսի հաշիւ հրատարակիլ է նաև այս տարի՝ անցեալ 1911 թ. գործունէութեան մասին: Հետաքրքրական է այդ հաշիւը, որի մասին մի քանի խօսք արժէ ասել:

Հոգաբարձութիւնը անցեալ 1911 թուին ունեցել է մուտք 78,665 ո. 24 կ. որ նախանցեալ տարուանից մօտ 17.600 ո. աւելի է: Եկամուտի աղբիւրները մեծ մասամբ կամ անշարժ կայքեր են և կամ կրտսերական դրամազուխներ. այսպէս՝ ստացուած է Ախշեանի տներից 6200 ո., Աղքատաց կոչուած կայքերից 3589 ո., Քարասուլիակի տնից՝ 10.800 ո. Մուրադխանեանի, Գ. Պապովի և Մ. Բարաջանի շինութիւնից 37000 ո., և այլն, ընդամենը 61.887 ո. 58 կ.: Դրամազուխներից եկամուտ ունեցել է՝—Լ. Բաթրեանի—376 ո., Դիաչքովի—3838 ո., Մարգասիրական Անկերութիւնից ֆնացած դրամազուխից—1142 ո., և այլն, ընդամենը 5.497 ո., 89.: Այս հաշուի մէջ յիշուած են նաև մի երկու գումար, որ կոչոււմ են «Վարժապետական Փօնդ» և «Գրականական Փօնդ»: Այլ և ստացուել է մշտական աւանդներից 190 ո., ժամանակաւոր աւանդներից 578 ո. 89 կ., ընթացական հաշուից 203 ո. 16 կ., նուէրներ 3064 ո., սպիտակեղէնի դպրոցարհեստանոցից 1099 ո., պատահական մուտքերից 4240 ո. և այլն, ընդամենայն տարեկան մուտքը 78.665 ո. 24 կ.

Ինչպէս տեսնում ենք Հոգաբարձութեան մուտքը հասնում է մի բաւական պատկառելի գումարի, որը և նա ծախսել է:

Այժմ հետաքրքրական է իմանալ, թէ ինչ բանի վրայ է ծախսում Հոգաբարձութիւնը իւր այդ խոշոր գումարը: Տպագրուած հաշուից տեսնում ենք, սր Հոգաբարձութիւնը իւր միջոցները ծախսում է շատ նպատակայարմար կերպով. նա անուշադիր չթողնելով չքաւոր դասի նիւթական ու ֆիղիքական կողմը, միևնոյն ժամանակ առանձին ուշադրութեան առարկայ է դարձրել դաստիարակչական կողմը: Այսպէս, Հոգաբարձութիւնը 1911 թ. կրթական նպատակների համար ծախսել է տալով Ա. թոշակաւոր սաների պահպանութեան համար 13.820 ո. 73 կ. Բ. միանուագ և ամսական նպաստ ուսանող-ուսանողուհիների և աշակերտաշակերտուհիների՝ 2604 ո. 43 կ., Գ. չքաւոր աշակերտներին շորեղէնի, դասական պիտոյքի 1071 ո. 74 կ., Դ. ծխական եկեղեցական 5 դպրոցներին՝ 6000., Ե. մանկապարտէզին և կարու-

ձևի արհեստանոցին 500 ու., ընդամենը 23 996 ու. 90 կ.: Հոգաբարձութիւնը սաներ է պահում Ռուսիայի բարձրագոյն դպրոցներում, տեղի թեմական դպրանոցում և միւս դպրոցներում, այլ և Գէորգեան ճեմարանում:

Հոգաբարձութիւնն ունի իւր Անկեղանոցն ու Որբանոցը, որոնք զետեղուած են յատուկ շէնքերի մէջ: Անկեղանոցում ընդունուած են ոչ միայն անկեղաները, այլ և որոնք զառամեալ հասակի կամ տեղական ու անբուժելի տկարութեան պատճառով իրենց գլուխը պահելու կարողութիւն չունին: Անկեղանոցն ունի երկու բաժին—կանանց և տղամարդկանց, որոնք միացած են ընդհանուր սեղանատնով: 1911 թ. անկեղանոցում եղել է 64 հոգի, 46-ը կին և 18-ը տղամարդ. անկեղանոցի ծախքն է 7458 ու. 10 կ. Անկեղանոցն ունի նաև հիւանդանոցային բաժին՝ իւր յատուկ բժշկով:

Եկեղեցական Հոգաբարձութեան Որբանոցը նպատակ ունի բոլորովին որբ կամ կիսաորբ երկու սեռի մանուկներին խնամել իւր յարկի տակ, տարրական ուսում տալ նրանց և սպա աւելի առաջադէմներին համապատասխան դպրոցներ զետեղել, իսկ միւսներին որևիցէ արհեստի կամ աշխատանքի նախապատրաստել կամ ծառայութեան վարժեցնել: 1911 թ. որբանոցում եղել է 27 որբ, որից 15-ը տղայ, իսկ 12-ը աղջիկ. դրանցից 7-ը թեմական դպրանոցում են սովորում, 1-ը Արհեստագիտական դպրոցում, 15-ը ծխական դպրոցներում և այլն: Հաշուետուութեան տարուայ մէջ որբանոցի վրայ ծախսուած է 3747 ու. 55 կ. Անկեղանոցի և Որբանոցի մերձաւոր հսկողութիւնը յանձնուած է եղել Հոգաբարձութեան անդամ Տ. Պօղոս ք. Բեղելեանին և Կարապետ Խոջայեանին:

Հոգաբարձութիւնն ունի նաև մի սպիտակեղէնի արհեստանոց, երեք տարուայ դասընթացով. աշակերտուհիների թիւն էր 24. երրորդ տարուայ աշակերտուհիները ստանում են իրենց կարածի 60 0/0-ը. տարուայ ընթացքում կարուած է 561 կտոր սպիտակեղէն և 231 հատ կանանց բլուզ: Աշակերտուհիները ստանում են սնունդ, ումանք նաև հանդերձեղէն և ոտնաման: Արհեստանոցի կառավարութիւնը յանձնուած է եղել Հոգաբարձութեան անդամ Ա. Չուզայեանին, որ մի խումբ կանանց և օրիորդների աջակցութեամբ առաջ է տարել գործը: Արհեստանոցի վրայ ծախս եղած է 3631 ու. 30 կ., իսկ եկամուտ է ունեցել կարած իրերից 812 ու. 47 կ.:

Բացի այս ամենից Հոգաբարձութիւնը օգնութեան է հասել նաև կարիքաւորներին՝ նախապէս ստուգելով դիմող չքաւորների կացութիւնն ու կարօտութեան աստիճանը: 1911 թ. ընթացքում

Ա. ամսական դրամական նպաստ տրուել է 28 այրի կանանց՝ յատկապէս բնակարանի վարձ վճարելու նպատակով. տարուայ ընթացքում տրուած է 1038 ո. Բ. որբանոցի մէջ տեղ չլինելու պատճառով 8 որբի պահպանութեան համար տրուած է 721 ո. Գ. երկու հոգու, որ աշխատանքի անընդունակ են, տրուած է 72 ո.։ Ապա միանուագ դրամական նպաստ տրուած է 55 հոգու 672 ո. 10 կ. (Թաղման, ճամբու ծախք, բժշկութեան, օժիտի համար կըն)։ Նպաստ տրուած է նաև միթերքներով (ալիւր, իւղ, թէյ, շաքար, հայ զինուորներին Ծննդեան և Զատիկի շրջալոյծին՝ սեղան կըն) 1531 ո. 74 կ.։ Զմբան սոսկալի ցրտերին, երբ վառելիքը թանկանում է (քարածուխ), Հոգաբարձութիւնը քարածուխ է բաժանում ոմանց ձրիաբար և ոմանց կիսագնիւ Այսպէս, անցեալ ձմբանը 262 հոգի կիսագնի քարածուխ են ստացել 4837 փութ՝ 8 կոպէկով. իսկ ձրիապէս բաժանուած է 911 փութ, 152 ո. 80 կոպէկի։

Թէ որբան զգալի է մանաւանդ քարածուխի կարիքը չբաւոր դասակարգի համար, այդ երևում է նրանից, որ Հոգաբարձութիւնը ունի կազմած մի յատուկ ֆոնդ քարածուխի համար. նոյն ֆոնդին նուիրած են նաև 1911 թ. ընթացքում Ք. Պապովեան 1000 ո., Աւթանդիլեան Խաթունը 700 ո. և մի քանի անձինք 65 ո. (փոխանակ հանգուցեալի վրայ պսակ դնելու)։

Հոգաբարձութիւնը բացի հաստատուն եկամուտներից, որոնք տարեց տարի աւելանում են, ունի և եկամուտի ուրիշ մանր աղբիւրներ, ինչպէս են՝ տօնշնորհաւորէք (810 ո. 70 կ.) եկեղեցիներում և մագաղիներում զանձաւիեր (188 ո.) պատահական նուէրներ (240 ո.), քաղաքային վարչութիւնից (600 ո.) և այլն։

Հոգաբարձութեան պատկանած շինութիւնների եկամուտներն աւելանում են ոչ միայն իրերի բնական ընթացքով, տընտեսական պատճառներով, այլ և Հոգաբարձութեան Զանքերով։ Այսպէս, օրինակ, Եկատերինոզար քաղաքում Քարասուլեանի կտակած շէնքը, որ առաջ չնչին եկամուտ ունէր, 1911 թ. արդէն 10,800 ո. է բերել, իսկ այս 1912 թ. պիտի բերէ մօտ 18,000 ո. շնորհիւ այն հանգամանքի, որ Հոգաբարձութիւնը հին շէնքի տեղ նորն է կառուցել ծախսելով 120,199 ո. 72 կ.։ Նմանապէս և Ն. Նախիջևանում Լազարեան Դազարոսի կտակած տան մի մասը ի նորոյ վերաշինելով 1911 թուին ստացել է վարձ 1150 ո., իսկ 1912 թուից ստանում է 7000 ո., իսկ 1918 թուից 7500 ո.։ Բացի այս Հոգաբարձութեան որբանոցը, որ գետեղուած էր մի անշուք և նեղուած շինութեան մէջ, գերեզմանատան կից, քաղաքի ծայրին, այժմ գետեղուած է քաղաքի կեդրոնում մի փա-

ուսնող յատուկ շինութեան մէջ, որ նուիրարերի է Յովհաննէս աղա Պաթրանեանը:

Ներկայումս Հոգարարձութեան կարողութիւնը հասնում է (առ 1 յունվ. 1912 թ.) 896,234 ուրլու. որից Ա. անշարժ կայք 699,564 ո., Բ. շարժական կայք—10,624 ո., Գ. տոկոսարեր թղթեր—143.634 ո., Դ. մշտական աւանդադրամ—5000 ո., Ե. ժամանակաւոր աւանդ—14.146 ո. Զ. թանկարժէք իրեր (հին գրամմներ)—1000 ո., է. ընթացական հաշուով—7032 ո. և այլն:

Արդէն այս համառօտ քաղուածքից էլ պարզորոշ է, թէ ինչպիսի գեղեցիկ և անսայթաք քայլեր է անում Ն. Նախիջևանի եկեղեցական Հոգարարձութիւնը՝ շնորհիւ գործին գլուխ անցած անձերի աննկուն ջանքերի և աշխատանքների և հայ հասարակութեան ցոյց տուած վստահութեան ու աջակցութեան:

Եկեղեցական Հոգարարձութիւնը բաղկացած է 14 անդամից, որից վեցը եկեղեցիների երեցփոխաններն են, 6-ը 6 եկեղեցիներից ընտրուած ներկայացուցիչներ և երկուսը Հոգևոր իշխանութեան կողմից նշանակուած քահանայ Հոգարարձութեան նախագահն է ըստ. Անդրէաս Սալթիկեան, քաղաքի ամենաընդունուած բժիշկներից մէկը, որը չնայելով իւր բազմաշխատ գործերին, ահա քանի շրջան է բոլորում այդ պաշտօնի մէջ և ամենայն բարեխղճութեամբ կատարում է իւր պարտականութիւնը, ինչպէս և Հոգարարձութեան միւս անդամներն ու գործավար Յակոբ Բողղանեանը:

Հետաքրքրական է, որ Հոգարարձութիւնը իւր այս ահագին գործը վարելու համար ունի վարձու գործավար, հաշուապահ, ճարտարապետ, գրագիր, կալուածների վերակացու, ծառաներ և այս ամենի համար տարեկան ծախսել է միմիայն 4132 ուրլի:

Չափազանց խրատական է Հոգարարձութեան հրատարակած այս հաշիւը, որի մէջ հետաքրքրուողը կգտնէ ամենամանրամասն տեղեկութիւններ Հոգարարձութեան թէ անշարժ կայքերի, թէ գրամական միջոցների և թէ ամբողջ գործունէութեան մասին: Տպագրութիւնը մաքուր է, լաւ թղթի վրայ և մեծ խնամքով կատարուած: Հաշիւը տպագրուած է և՛ հայերէն և՛ ռուսերէն:

Մ. Վ.